Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի
N 1955-Ա որոշմամբ հաստատված հանձնաժողովի
2026 թվականի հունիսի 22-ի N 02-26 արձանագրության

Ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու ընթացակարգի և շահագործողի կարգավիճակ ստանալու համար ներկայացված հայտի գնահատման մեթոդական ուղեցույց[1]

ՀՀ-ում ազատ տնտեսական գոտիների ստեղծման նպատակը

ՀՀ ազատ տնտեսական գոտիները ստեղծվում են ՀՀ արտահանումը, օտարերկրյա ուղղակի ներդրումները (այդ թվում՝ հանրահայտ բրենդային և վերազգային կորպորացիաների) խթանելու, նոր աշխատատեղեր ստեղծելու, նոր տեխնոլոգիաների ներդրման, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով:

«Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ազատ տնտեսական գոտին Կառավարության կամ մասնավոր նախաձեռնության հիման վրա, Կառավարության սահմանած՝ Հայաստանի Հանրապետության տարածքի մաս է, որտեղ ձեռնարկատիրական և այլ գործունեությունն իրականացվում է Օրենքով, 2010 թվականի

---

[1] Ծանուցում
Սույն ուղեցույցը նախատեսված է Հանձնաժողովի անդամների համար՝ գործարար ծրագրերի գնահատման գործընթացը հնարավորինս պարզեցնելու և առավել օբյեկտիվ դարձնելու նպատակով:
Հարկ է նշել, որ Հանձնաժողովի անդամները գործարար ծրագրերը գնահատելիս առաջնահերթ հիմք են ընդունում օրենսդրությամբ սահմանված չափանիշները, և գնահատումն իրականացվում է Հանձնաժողովի անդամների մասնագիտական կարողությունների, գիտելիքների և փորձի հիման վրա:

հունիսի 18-ի «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ» համաձայնագրով և ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված առանձնահատկություններին համապատասխան, ինչպես նաև կարող է կիրառվել «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը:

ԱՏԳ շահագործողների ռեեստրում ներառվելու ընթացակարգ

ՀՀ ազատ տնտեսական գոտիների ռեեստրում ներառվելու (շահագործողի թույլտվություն ստանալու) համար, համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի N 727-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում), անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.



ԱՏԳ շահագործողների ռեեստրում ներառվելու հայտը գնահատելու կարգը

ԱՏԳ շահագործողների ռեեստրում ներառվելու հայտով ներկայացված գործարար ծրագիրը, համաձայն Որոշման, գնահատվում է Ազատ տնտեսական գոտիների հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից հետևյալ չափանիշներով.

- արտահանման ուղղությունները և ծավալները.
- աշխատատեղերի քանակը.
- ընդհանուր ներդրումների ծավալները.
- համապատասխանությունն ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակներին և գործառնական տեսակին.
- օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներ իրականացնող շահագործողների դեպքում համապատասխանությունն օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված անհրաժեշտ հիմնական պայմաններին՝ բաշխված ըստ տարիների:

Համաձայն Որոշման՝ գործարար ծրագիրը գնահատվում է Հանձնաժողովի անդամների կողմից՝ յուրաքանչյուր գնահատման չափանիշի համար կիրառելով կշռային գործակիցներ, որոնց համախումբը չպետք է գերազանցի 100 միավորը:

ԱՏԳ շահագործողների ռեեստրում ներառվելու հայտը գնահատելու մեթոդաբանությունը

Ծրագիրը գնահատվում է Հանձնաժողովի կողմից, ներկայացված չափորոշիչների հիման վրա՝ ստորև ներկայացված մեթոդաբանությամբ (տե՛ս Աղյուսակ 1 և Աղյուսակ 2): Աղյուսակ 1-ը ներկայացնում է Շահագործողի կարգավիճակ ստանալու համար ներկայացված հայտի գնահատման մեթոդաբանությունը Ազատ տնտեսական գոտում թույլատրվող տնտեսական գործունեության ոլորտների բաժիններում ներառված գործունեության տեսակների (բացառությամբ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի

14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներ) իրականացման մասով, իսկ Աղյուսակ 2-ը ներկայացնում է գնահատման մեթոդաբանությունը միայն «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակների իրականացման մասով:

Հանձնաժողովի կողմից գնահատումը պարզեցնելու և օբյեկտիվությունը հնարավորինս ապահովելու համար գործարար ծրագրի գնահատման որոշ չափանիշներ ներկայացվել են ստորև բերված բացվածքներով և համապատասխան կշիռներով՝

Աղյուսակ 1-ի մասով՝

1. **Արտահանման ուղղություններ և ծավալներ –** կշիռը 35
   - արտահանման կանխատեսվող տարեկան ծավալը (դրամական արտահայտությամբ) – կշիռը 15
   - արտահանման երկրներ– կշիռը 15
   - արտահանման/մարքեթինգային ռազմավարության առկայություն (արտահանման շուկաներ, թիրախային խմբեր և այլն) – կշիռը 5:
2. **Աշխատատեղերի քանակը –** կշիռը 25
   - աշխատատեղերի քանակը – կշիռը 15
   - միջին աշխատավարձի չափը - կշիռը 10:
3. **Ընդհանուր ներդրումների ծավալները –** կշիռը 30
   - ներդրումների ընդհանուր ծավալը – կշիռը 10
   - ներդրումների բացվածքը՝ ըստ տարիների և հոդվածների – կշիռը 10
   - կապիտալ և ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը – կշիռը 10:
4. **Ծրագրի համապատասխանությունն ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակներին և գործառնական տեսակին** – կշիռը 10

- ծրագրով նախատեսված գործունեության համապատասխանությունը ԱՏԳ գործառնական տեսակին – կշիռը 10:

Գործարար ծրագրի ընդհանուր գնահատականը ստացվում է յուրաքանչյուր չափանիշի մասով Հանձնաժողովի անդամների միջին կշռված գնահատականների գումարմամբ: Հանձնաժողովի կողմից անցողիկ շեմ է սահմանվել 60 միավորը:

Աղյուսակ 1. Գնահատման չափանիշները, կշիռները և համապատասխան միավորները*

N	Գնահատման չափանիշ՝ ըստ Որոշման	Ենթաչափանիշ	Չափորոշիչ շեմ և միավոր	Գնահատա-կան
1.	**Արտահանման ուղղություններ և ծավալներ[2]– կշիռը 35**	Արտահանման/ կանխատեսվող տարեկան ծավալը (դրամական արտահայտությամբ) – **15**	• Առկա չէ – 0 միավոր • Մինչև 30% արտադրանքի արտահանման դեպքում – 1-59 միավոր, • 30-60% արտահանման դեպքում – 60-79 միավոր, • 60%-ից բարձր արտահանման դեպքում– 80-100 միավոր	Կշիռ*Միավոր/ 100
		Արտահանման երկրներ - **15**	• Առկա չէ – 0 միավոր • Առկա է 1 երկիր– 1-59 միավոր • Առա է 2-4 երկրներ – 60-79 միավոր • Առա է 5 և ավելի երկրներ – 80-100 միավոր	

[2] Ծառայությունների ոլորտում (օրինակ՝ կացության և հանրային սննդի կազմակերպում) գործունեություն իրականացնող ընկերությունների դեպքում արտահանման ծավալ կարող է համարվել ԱՏԳ տարածքում մատուցված ծառայությունների ծավալը:

		Արտահանման/մարքեթինգային ռազմավարության առկայություն (արտահանման շուկաներ, թիրախային խմբեր և այլն) - **5**	• Առկա չէ – 0 միավոր • Առկա է, բայց մասամբ է բավարար – 1-59 միավոր • Առկա է և բավարար – 60-100 միավոր	
2.	**Աշխատատեղերի քանակը – կշիռը 25**	Աշխատատեղերի քանակը - **15**	• 0-20 նոր աշխատատեղի ստեղծում – 0-59 միավոր • 21-70 նոր աշխատատեղի ստեղծում – 60-79 միավոր • 71 և ավելի նոր աշխատատեղի ստեղծում – 80-100 միավոր	
		Միջին աշխատավարձի չափը – **10**	Եթե միջին աշխատավարձը կազմում է տվյալ ոլորտի հանրապետական միջին աշխատավարձի՝ • մինչև 100%-ը – 0-40 միավոր • 100%-ը – 41-70 միավոր • 100%-ից ավելի – 71-100 միավոր	
3.	**Ընդհանուր ներդրումների ծավալը – կշիռը 30**	Ներդրումների ընդհանուր ծավալը - **10**	• Մինչև 1 մլն ԱՄՆ դոլար – 0-59 միավոր • 1-10 մլն ԱՄՆ դոլար – 60-79 միավոր • 10 մլն ԱՄՆ դոլարից ավելի – 80-100 միավոր	
		Ներդրումների բացվածքը՝ ըստ տարիների և հոդվածների - **10**	• Առկա չէ – 0 միավոր • Առկա է, բայց մասամբ բավարար – 1-59 միավոր • Առկա է և բավարար – 60-100 միավոր	
		Կապիտալ և ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը - **10**	Կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը ներդրումների ընդհանուր ծավալում՝ • 0-30 տոկոս – 0-59 միավոր • 31-60 տոկոս – 60-79 միավոր • 61-100 տոկոս – 80-100 միավոր	

4.	**Ծրագրի համապատասխանու-թյունն ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակներին և գործառնական տեսակին – կշիռը 10**	Ծրագրով նախատեսված գործունեության համապատասխանությունը ԱՏԳ գործառնական տեսակին - **10**	• չի համապատասխանում – 0 միավոր • համապատասխանում է մասամբ – 1-59 միավոր • համապատասխանում է – 60- 100 միավոր	
				Գնահա-տականների գումար

Աղյուսակ 2-ի մասով՝

1. **Արտահանման ուղղություններ և ծավալներ –** կշիռը 15
   - արտահանման կանխատեսվող տարեկան ծավալը (դրամական արտահայտությամբ) – կշիռը 5
   - արտահանման երկրները– կշիռը 5
   - արտահանման/մարքեթինգային ռազմավարության առկայություն (արտահանման շուկաներ, թիրախային խմբեր և այլն) – կշիռը 5:
2. **Աշխատատեղերի քանակը –** կշիռը 15
   - աշխատատեղերի քանակը – կշիռը 10
   - միջին աշխատավարձի չափը - կշիռը 5:
3. **Ընդհանուր ներդրումների ծավալները –** կշիռը 30
   - ներդրումների ընդհանուր ծավալը – կշիռը 10
   - ներդրումների բացվածքը՝ ըստ տարիների և հոդվածների – կշիռը 10

- կապիտալ և ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը – կշիռը 10:

4. **Ծրագրի համապատասխանությունն ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակներին և գործառնական տեսակին** – կշիռը 10
   - ծրագրով նախատեսված գործունեության համապատասխանությունը ԱՏԳ գործառնական տեսակին – կշիռը 10:
5. **Ծրագրի համապատասխանությունն օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված անհրաժեշտ հիմնական պայմաններին՝ բաշխված ըստ տարիների** – կշիռը 30
   - Օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ գործունեության տեսակների արդյունքներով եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների ներկայացվածությունը - **10**
   - Օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ գործունեության տեսակների արդյունքներով եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների ներկայացվածությունը – **10**
   - Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված՝ գործառնական ծախսերի և եկամուտների հարաբերակցությունը - **10**

Գործարար ծրագրի ընդհանուր գնահատականը ստացվում է յուրաքանչյուր չափանիշի մասով Հանձնաժողովի անդամների միջին կշռված գնահատականների գումարմամբ: Հանձնաժողովի կողմից անցողիկ շեմ է սահմանվել 60 միավորը:

Աղյուսակ 2. Գնահատման չափանիշները, կշիռները և համապատասխան միավորները*

N	Գնահատման չափանիշ՝ ըստ Որոշման	Ենթաչափանիշ	Չափորոշիչ շեմ և միավոր	Գնահատա-կան
1.	**Արտահանման ուղղություններ և ծավալներ – կշիռը 15**	Արտահանման կանխատեսվող տարեկան ծավալը (դրամական արտահայտությամբ) – **5**	• Առկա չէ – 0 միավոր • Մինչև 30% արտադրանքի արտահանման դեպքում – 1-59 միավոր, • 30-60% արտահանման դեպքում – 60-79 միավոր, • 60%-ից բարձր արտահանման դեպքում– 80-100 միավոր	Կշիռ*Միավոր/ 100
		Արտահանման երկրները - **5**	• Առկա չէ – 0 միավոր • Առկա է 1 երկրներ– 1-39 միավոր • Առա է 2-4 երկիր – 40 -79 միավոր • Առա է 5 և ավելի երկրներ – 80-100 միավոր	
		Արտահանման/մարքեթինգային ռազմավարության առկայություն (արտահանման շուկաներ, թիրախային խմբեր և այլն) - **5**	• Առկա չէ – 0 միավոր • Առկա է, բայց մասամբ է բավարար – 1-59 միավոր • Առկա է և բավարար – 60-100 միավոր	
2.	**Աշխատատեղերի քանակը – կշիռը 15**	Աշխատատեղերի քանակը - **10**	• 0-20 նոր աշխատատեղի ստեղծում – 0-59 միավոր • 21-70 նոր աշխատատեղի ստեղծում – 60-79 միավոր • 71 և ավելի նոր աշխատատեղի ստեղծում – 80-100 միավոր	
		Միջին աշխատավարձի չափը – **5**	Եթե միջին աշխատավարձը կազմում է տվյալ ոլորտի հանրապետական միջին աշխատավարձի՝	

			• մինչև 100%-ը – 0-40 միավոր • 100%-ը – 41-70 միավոր • 100%-ից ավելի – 71-100 միավոր	
3.	**Ընդհանուր ներդրումների ծավալը – կշիռը-30**	Ներդրումների ընդհանուր ծավալը - **10**	• Մինչև 1 մլն ԱՄՆ դոլար – 0-59 միավոր • 1-10 մլն ԱՄՆ դոլար – 60-79 միավոր • 10 մլն ԱՄՆ դոլարից ավելի – 80-100 միավոր	
		Ներդրումների բացվածքը՝ ըստ տարիների և հոդվածների - **10**	• Առկա չէ – 0 միավոր • Առկա է, բայց մասամբ բավարար – 1-59 միավոր • Առկա է և բավարար – 60-100 միավոր	
		Կապիտալ և ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը –**10**	Կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը ներդրումների ընդհանուր ծավալում՝ • 0-30 տոկոս – 0-59 միավոր • 31-60 տոկոս – 60-79 միավոր • 61-100 տոկոս – 80-100 միավոր	
4.	**Ծրագրի համապատասխանու-թյունն ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակներին և գործառնական տեսակին – կշիռը 10**	Ծրագրով նախատեսված գործունեության համապատասխանությունը ԱՏԳ գործառնական տեսակին - **10**	• չի համապատասխանում – 0 միավոր • մասամբ է համապատասխանում – 1-59 միավոր • համապատասխանում է – 60-100 միավոր	

5.	**Ծրագրի համապատասխանու-թյունն օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված անհրաժեշտ հիմնական պայմաններին՝ բաշխված ըստ տարիների – կշիռը 30**	Օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ գործունեության տեսակների արդյունքներով եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների ներկայացվածությունը - **10**	• Առկա չէ գործարար ծրագրում – 0 միավոր • ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 10-ի N 1591-Ն որոշման համաձայն՝ ներկայացված է գործարար ծրագրում, սակայն մասամբ է բավարար – 0-59 միավոր • ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 10-ի N 1591-Ն որոշման համաձայն՝ հստակ և մանրամասնորեն ներկայացված է գործարար ծրագրում – 60-100 միավոր	
		Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված՝ որակավորված, լրիվ դրույքով աշխատողների տեսակարար կշիռն ընդհանուր աշխատատեղերի թվի մեջ - **10**	• Տեսակարար կշիռը փոքր է կամ հավասար է 50 տոկոսի– 0-59 միավոր • Տեսակարար կշիռը մեծ է 50 տոկոսից– 60-100 միավոր	
		Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված՝ գործառնական ծախսերի և եկամուտների հարաբերակցություն - **10**	Գործառնական ծախսերի տեսակարար կշիռը եկամուտների ընդհանուր ծավալում՝ • Մինչև 10 %- 0-10 միավոր • 10-ից 100 %- 11-100 միավոր	
				Գնահա-տականների գումար

Շահագործողի կարգավիճակ ստանալու համար ներկայացված հայտի գնահատման թերթիկ (Ազատ տնտեսական գոտում թույլատրվող տնտեսական գործունեության ոլորտների բաժիններում ներառված գործունեության տեսակների (բացառությամբ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներ) իրականացման մասով					
No.	Գնահատման չափանիշ	Ցուցանիշներ	Կշիռ	Միավոր /0-100/*	Գնահատական
1	2	3	4	5	6 ((5x4)/100)
1	Արտահանման ուղղություններ և ծավալներ	Արտահանման կանխատեսվող տարեկան ծավալը (դրամական արտահայտությամբ)	15		0.0
		Արտահանման երկրներ	15		0.0
		Արտահանման/մարքեթինգային ռազմավարության առկայություն (արտահանման շուկաներ, թիրախային խմբեր և այլն)	5		0.0
2	Աշխատատեղերի քանակը	Աշխատատեղերի քանակը	15		0.0
		Միջին աշխատավարձի չափը	10		0.0
3	Ընդհանուր ներդրումների ծավալները	Ներդրումների ընդհանուր ծավալը	10		0.0
		Ներդրումների բացվածքը՝ ըստ տարիների և հոդվածների	10		0.0
		Կապիտալ և ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը	10		0.0
4	Ծրագրի համապատասխանությունն ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակներին և գործառնական տեսակին	Ծրագրով նախատեսված գործունեության համապատասխանությունը ԱՏԳ գործառնական տեսակին	10		0.0
Ընդհանուր գնահատական			100		0.0

*ամբողջական թվերով,
անցողիկ շեմը՝ 60 միավոր

Շահագործողի կարգավիճակ ստանալու համար ներկայացված հայտի գնահատման թերթիկ («Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակների իրականացման մասով)

No.	Գնահատման չափանիշ	Ցուցանիշներ	Կշիռ	Միավոր /0-100/*	Գնահատական
1	2	3	4	5	6 ((5x4)/100)
1	Արտահանման ուղղություններ և ծավալներ	Արտահանման կանխատեսվող տարեկան ծավալը (դրամական արտահայտությամբ)	5		0.0
		Արտահանման երկրները	5		0.0
		Արտահանման/մարքեթինգային ռազմավարության առկայություն (արտահանման շուկաներ, թիրախային խմբեր և այլն)	5		0.0
2	Աշխատատեղերի քանակը	Աշխատատեղերի քանակը	10		0.0
		Միջին աշխատավարձի չափը	5		0.0
3	Ընդհանուր ներդրումների ծավալները	Ներդրումների ընդհանուր ծավալը	10		0.0
		Ներդրումների բացվածքը՝ ըստ տարիների և հոդվածների	10		0.0
		Կապիտալ և ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը	10		0.0
4	Ծրագրի համապատասխանությունն ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակներին և գործառնական տեսակին	Ծրագրով նախատեսված գործունեության համապատասխանությունը ԱՏԳ գործառնական տեսակին	10		0.0
5	Ծրագրի համապատասխանությունն օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված անհրաժեշտ հիմնական պայմաններին՝ բաշխված ըստ տարիների	Օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ գործունեության տեսակների արդյունքներով եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների ներկայացվածությունը	10		0.0
		Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված՝ որակավորված, լրիվ դրույքով աշխատողների տեսակարար կշիռն ընդհանուր աշխատատեղերի թվի մեջ	10		0.0
		Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված՝ գործառնական ծախսերի և եկամուտների հարաբերակցություն	10		0.0
Ընդհանուր գնահատական			100		0.0

*ամբողջական թվերով, անցողիկ շեմը՝ 60 միավոր